ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1,
հեռ.0253-57-6-82, 098-04-80-46

թիվ 03- 21

<<13>> հունիսի 2012թ.

Լոռու մարզպետ՝
պարոն Ա. Նալբանդյանին

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու 12.06.2012թ. թիվ 16-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1,
հեռ.0253-57-6-82, 098-04-80-46

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունիսի 2012 թվականի N 16-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 627-րդ հոդվածով, ՀՀ <<Հողային օրենսգրքի 66 հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով, <<Տեղական ինքնակառավարման մարսին>> ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետով, հաշվի առնելով, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի կազմում և հիմք ընդունելով <<Արգիշտի -1>> ՍՊԸ-ի գրությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.<<Արգիշտի-1>> ՍՊԸ-ի <<Մարցի գետ-2>> ՓՀԷԿ-ի շենքերի շինությունների կառուցապատման և սպասարկման նպատակով հատկացված 06-004-057-011 ծածկագրով էներգետիկայի 0,1278 հա հողամասը ուղղակի վաճառքով, հողամասի կադաստրային արժեքով՝ 122688 հազար (ՀՀ դրամով) սեփականության իրավունքով օտարել <<Արգիշտի -1>> ՍՊԸ -ի՝ << Մարցի գետ- 2>> ՓՀԷԿ -ի շենքի և շինությունների սպասարկման նպատակով:

2. Հողամասի պետական գրանցման համար հիմք է հանդիսանում հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը:

3.Պարտավորեցնել <<Արգիշտի-1>> ՍՊԸ-ին 10-օրյա ժամկետում մուծել հողամասի կադաստրային արժեքը և օրենքով սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի ք. Վանաձորի տարածքային ստորաբաժանում:

	Կողմ(4)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ՌՈՄԱՆ ԳՈՐԳԻՆՅԱՆ			
ՍԵՅՐԱՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ			
ՄԱՐՏՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ			
ԱՆԱՀԻՏ ՌԱՄԱԶՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

2012թ. հունիսի 12
ք. Թումանյան